## 12. ԱՆԴԻՆԱՍ

Կէլնի մեյ թակավորմ, որ շատ չարսիրտ մարթմ էր: Մեկ օր, կիշեր էրազի մեջ խրիշտակ կուգյա իստր՝ Անդինաս թակավրուն կասի. - Անդինա՛ս, քյո չարութնի խամար, քյո խոգյին իկեր եմ, որ պիտի առնեմ:

Անդինաս կինի խրիշտկի ոտ, աղաճանքյ, պաղատանքյ կինի, որ խրիշտակ ինոր խոգյին չառնի: Խոսքյ կուտա չում մկա ուր արած չարութնի դիմաց պարութեն անի:

Խրիշտակ կէրթա աստծուն կպատմեխոսի, աստվածն էլ կների իտոր:

Անդինաս թակավոր, քնուց որ կարթննա, աշխըրից ումուդ կտրուկ, նստե վեր ուր վիճակին կմտածի:

Շատ կմտածի, թե ի՞նչ անեմ, ինչ չանեմ, կմնա՝ պառավմ կմտնի ներս կասի. - Թակավոր ապրած, ընչի՞ ըտսկնեմ դյուշյումիշ կէլնես, քյո փաշեքյ վաւզիրներ, որ փոխես, նորեր տնես, նորերաց ի՞նչխ որ ասես, ըսկուն կվարվեն ժողովրդի խետ: Տյու էլ տարին չլմնցած, էլի մեյ խատ փոա քյո երկրներ, խենքյ քյե խամար ի՞նչ կասեն:

Անդինաս թակավոր պառվու խաբարն ականջ կանի, կէլնի ուր վազիր վյուքալեքյ, փաշեքյ կփոխի, նորեր կտնի տեղ, կպատվիրի, որ առալու խետ աղեկ վարվեն, շախվելու ճամբախ նշանց տան, որ բալքի ժողովուրդ աղոթք անի աստծուն, աստված ների ինոր մեղքյեր:

Չքյաշե մեյ տարի, թակավոր կէլնի ուր երկրներ փոալ՝ խետ ուր վազիրին:

Շատ կէրթան, թե քյիչ, քյաղքյե-քյաղաքյ, գյեղե-գյեղ կէրթան մեյ գյեղմ: Գյեղացում տուն մսաֆր կէլնեն, կնստեն իրիկուն, խաց կուտեն կպոծնեն, թակավոր էն մարդուն կխառցուցի. - Ի՞նչ կա, ի՞նչ չկա, ծեր երկրի առվալն ի՞նչխ ի:

Գյեղական կասի. - Վալլա՛, առաճ մեր թակավոր շատ գյեշ մարթ էր, աման մկա շատ աղեկ ի: Աստված ինոր երկար կյանքյ տա, մեր նաֆան էկավ տյուս:

Էտա տեղ կիշեր կմնան, առաւտուն կէլնեն կէրթան:

Կէրթան տաշտի մեշ, տիսնան, որ գյեղական վիցկու մաշ պռնե, յո՛շ, յո՛շ անելեն եզներ կշի, կէրթա էն գյլեոխ, կուգյա էսա գյլեոխ, արտ կվարի:

Թակավրու քյեֆ կուգյա, կասի. - Ես էլ պիտի էրթամ էսա մաջ պռնեմ, տսւթմ երկու էլ ես քյշեմ:

Վազիր կկայնի էնտեղ, թակավոր կէրթա մո գյեղական. կասի. - Պարեով քյե, ախպեր, աստված կարողութեն տա:

Կասի. - Աստծու պա̈րին:

- Ախպեր զիկ խավաս էլա̈վ, մեյ խատ կուտա՞ս, քյո մաչ պռնեմ. մեկ էրկու տա̈թ քյշեմ քյո վիցկին:

Գեղական կասի. - Տյու կութին տյու զի չկյա̈րեմ ջինեմ, տյու տա̈թմ երկու կնա արե:

Արտի տեր կառնի կութին. կբաշլայի չկյա̈րա շինել, թակավոր մաչ կպռնի ծեռ, կբաշլայի տա̈թմ էրկու էրթա̈լ-գյա̈լ:

Գյեղական չկարա խոսի, կէլնի վեր: Թակավոր կթողնի մաչ, խետ վա̈զիրին էլմ ուրենց ճա̈մբախ կէրթա̈ն:

Թակավոր կտիսնա, որ ռնչպարութեն ջատ անուշ պյա̈ն ի, կէրթա̈ ուր թա̈խթի վերեն. խա̈զինեն կպանա̈. կբաշլայի վիր որ եզ չկա, եզ առնել տալ. սերմ չկա՝ սերմի փա̈րա̈ տալ, խողի փա̈րա̈ տալ. հրաման կանի, որ ուր երկրի մեջ ափմ խող չմնա առանց վա̈րել, ցանել:

Էն տարին մեկ ուրիշ թակավրու երկիր սով կինի. էն երկրի թակավոր կէլնի մարթ կէորեոխկի Անդինաս թակավորին, կասի. - Իմ երկիր սով ինգյեր ի, զի խաց տուր փա̈րով:

Անդինաս ջյույա̈բ կանի. կասի. - Ես ի՞նչխ կանամ աստծու տված պերքյպարին փա̈րեով ծախեմ քյէ:

Մարթեր կէլնեն կէրթա̈ն թակավրուն կասեն:

Թակավոր կլսի կպա̈րկա̈նա, կէլնի ուր ա̈սքյրներ կժողվի, խա̈բա̈ր կէորեոխկի Անդինասին. կասի. - Տյու փա̈րեով չտվիր, ես կռվով կառնեմ:

Անդինաս կառնի ուր ա̈սքյրներ կէրթա̈ կռիվ, կէրթա̈ կխասնեն գետի ափ. կարմունջ չկա, պյա̈ն չկա. ոչ էն կանա ընցնե էսա տեխ, ոչ Անդինաս՝ էնտեխ:

Կկանգնեն գյետի ա̈փ, խետ մեյմկու կռիվ: Էն կա̈նդար կզա̈նեն մեյմեկու, մեյմկաց էն կա̈նդա̈ր կսպանեն, որ ա̈րուն գյետի ճյուր կկարմրցուցի:

Գյետն էլ որ կէրթա̈ կթա̈փի ծով. կթա̈փի էն ծով, որ ծովերաց թակավրու քյեոշկ սարեն դա̈ էր:

Մեկ օր, էրկու օր, մեյ տարի, էրկու տարի, իսոնց կռիվ վերճ չառնե:

Ծովերաց թակավոր, խողածին թակավորներաց էսա արած տիսնալով կէլնի իրեքյ մարթ կէորեոխկի մոտ խողածին թակավորներ:

Կուգյա̈ն մոտ Անդինաս թակավոր. կասեն. - Խերիքյ չի՞ կռիվ անեքյ:

Կասի. - Ես ի՞նչխ անեմ, կա̈բա̈հա̈թ իմ չէ, կա̈բա̈հա̈թ էնա թակավրուն ի. իկե իմ երկրեն զոռով խաց կուզի. որ տանի:

Ծովերա̈ց թակավրու մարթեր կէրթա̈ն էն մեկէլին կասեն. - Ընչի՞ կռիվ կանեքյ:

Կասի. - Կա̈բա̈հա̈թ Անդինասին ի, որ ես խաց ուզեցի փա̈րով բիլէ չի տուր:

Կասեն. - Իկեքյ սիրով վերջ տվեքյ էսա կռվուն: Քյո աղչիկ տու Անդինաս թակավրուն, թող թակավորն էլ քյո խաց տա, պռծեքյ մեյ մկու ա̈զա̈տվեքյ:

Թակավոր կլսի, կէորեոխկի [illegible] ղչիկ պիրի. Անդինաս թակավրուն նշանց կուտա:

Անդինաս թակավոր. որ աղչիյ կտիսնա. կասի. - Է՜յ վախ. իմ ծեռ կոտրեր, ես էսա թակավրուն չզա̈նի:

Անդինաս աղչկան խաթրին ծին կխեծնի, կանչի աստված իրեքյ տիր, ուր կուտա զյետ: Աղչիկ որ գյետի ա̈փ կայնուկ էր, թակավրուն թամաշա կանի:

Թակավոր կտիսնա, որ չկանա գյետն ընցնե. կքյաշի ուր մեճաց. կթալի աղչկան մեջք, կկանչի աստված. կքյաշի աղչիկ. կթալի ուր թուրքյ, կպիրի ուր չմրդրի տակ:

Աղչիկ, որ կուգյմ էսա իրես, կոիվ կդմդրի:

Կառնեն, կէրթմն քյաղաքյ, թակավոր խարսնիսի թուդմրյուք կտիսնա: Խարսնիս կբաշլային, յոթն օր, յոթ կիշեր խարսնիս կանեն, թակավոր էտա աղչկան կառնի:

Ինն ամիս կթմմի, թակավրուն մեյ տղեմ կէլնի, թակավոր ուր տղեն վմրժմտուն կդնի, կկրթի չուր տղեն կէլնի տսվերկու տարեկան:

Թակավոր կմեռնի:

Կպիրեն թակավրու ախպեր կտնեն տեղ, չում տղեն ճեռճանա:

Թակավոր կնստի թմխթ, ճրամսն կանի, որ ուր ախպոր լաճուն տան ջալմղներաց, որ տանեն սպանեն:

Ջմլմղներ կտանեն. որ տղին սպանեն, էն մեկու սիրտ կցավա, կասի. - Չսպանենքյ, թողնենքյ մեչ էսա մեշին, թողնենքյ էրթմնք:
Տղին կթողնեն մեչ մեշին, թողնեն կէրթմն: Տղեն կմնա մեչ մեշին, շատ կմնա, թե քյիչ, աստված կիդի: Մեկ օր խովվում մեկ կէրթմ կտիսնա էդա տղին, կառնի կպիրի ուր տուն, կանի ուր տղա:

Մեկ էրկու տարի սորա թակավոր կմեռնի, ինոր տեղ կնստի ինոր տղեն՝ Կուռնաս:

Մեկ օր Անդինաս թակավրու տղեն, որ էլեր էր քսան, քսանխինգյ տարեկան, մեկ օր քյնու մեջ խրեշտակ կուգյմ ինոր էրազ, կասի. - Տյու Անդինաս թակավրու տղեն ես, առատուն կէլնես, ճմմբմխ կպռնես, կէրթմս քյո քյեռու տուն, ես քյո քյեռուն ասեր եմ, քյո քեռին քյե կպիրի, էլմ կդնի վեր քյո թախթին:

Տղեն քյնուց որ կմրթննա, առատուն կէլնի ուր խոր կաց պմրեով կանի, փետ կպռնի ծեռ, կէրթմ, կէրթմ կխասնի ուր քյեռու երկիր, կէրթմ թակավրու տուն:

Քյեռին, որ կտիսնա ուր քյուրոչ լաճ, շատ կուրախնա վերեն, կպիրի ներս, մեյ ժամանակ կպախի մոտ ինքյ:

Մեկ օր կէլնի լուր կէորեոխկի Կուռնասին, թե ի՞նչ կասես, յա՛ն թմխտից կէճնես տակ, յա՛ն չէ՝ կոիվ կանեմ խե քյե, ես Անդինասի տղեն կդնեմ քյո տեղ:

Կուռնաս կէլնի մսքյար կժողվե: Անդինասի աներձմքյ էլ ուր մսքյրներ կժողվեն, կէրթմն կոիվ:

Շատ կովելուց վերճ Անդինասի տղին կտնի տեղ, ուր էրկու թակավրութնի երկրներ կխառնեն իրար:

Տմռնա կպիրի ուր վմզիրի աղչիկ, կուտա Անդինասի լաճուն, յոթն օր, յոթ կիշեր խարսնիս կանեն: Նոր կառնի ուր մսքյրներ, կդառնա ուր երկիր: